Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Սամվել Հարությունյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Մինսկ (Բելառուսի Հանրապետություն), 2018թ. նոյեմբերի 28-ից 30-ը

4. Հրավիրող կողմը

Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտե, Գիտատեխնիկական և նորարարության ոլորտներում համագործակցության միջպետական խորհուրդ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն

- Գիտատեխնիկական համագործակցության հարցերով հայ-բելառուսական համատեղ հանձնաժողովի երրորդ նիստի աշխատանքներին,
- Գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի 23-րդ նիստի աշխատանքներին:

6. Քննարկված թեմաները

- «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ԲՀ ԳՏՊԿ - 2018» մրցույթի արդյունքների ամփոփում, գիտատեխնիկական ոլորտում հայ-բելառուսական համագործակցության

ընդլայնում, համատեղ գիտական փորձաքննության կազմակերպում, մասնագետների պատրաստման և վերապատրաստման ծրագրեր, համագործակցության նոր ոլորտներ՝ բժշկություն, լազերային ֆիզիկա, կենսաինֆորմատիկա:

- Սևանա լճում Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության համար ազգային արժեք հանդիսացող քաղցրահամ ջրավազանների էկոհամակարգերի ուսումնասիրության միջազգային գիտագործնական կենտրոն - կենսաբանական կայանի գործունեություն և ֆինանսավորում, ԱՊՀ անդամ-պետությունների գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում համագործակցության միջպետական ծրագրի նախագծի հայեցակարգի մշակում (2021-2030 թվականների համար), Գիտատեխնիկական և նորարարության ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի քաղաքականությունը երիտասարդ գիտնականներին աջակցության խնդրում, 2019թ. գիտատեխնիկական համագործակցության ոլորտում ԱՊՀ միջոցառումների ցանկը, Գիտատեխնիկական և նորարարության ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի ու գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում համագործակցության հարցերով գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի հետ համագործակցություն և այլ հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Գիտատեխնիկական համագործակցության հարցերով հայ-բելառուսական համատեղ հանձնաժողովի երրորդ նիստին ելույթ ունեցավ ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը՝ ներկայացնելով գիտության ոլորտի արդի վիճակը Հայաստանում, Հայաստանի Հանրապետության համար գերակա ուղղությունները, գիտական փորձաքննության ոլորտում գրանցված արդյունքները: Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության քաղաքական դաշտում տեղի ունեցած փոփոխությունները՝ Սամվել Հարությունյանը նշեց ՀՀ կառավարության առանձնահատուկ մոտեցումը գիտության ոլորտի զարգացման գործընթացին, ինչը հզոր խթան կհանդիսանա գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտների ձեռքբերումների և համագործակցային կապերի ընդլայնման գործընթացում:

Սամվել Հարությունյանը ներկայացրեց նաև Գիտության զարգացման ռազմավարության (մինչև 2020թ.) միջոցառումների ծրագիրը: Մանրամասնել է նաև «Արդյունավետ գիտաշխատող» և «Արդյունավետ երիտասարդ գիտաշխատող» մրցույթների արդյունքում գիտնականների մասնագիտական որակի բարձրացման ուշագրավ երևույթը. ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեն, ստեղծելով համապատասխան մրցակցային միջավայր, դրամաշնորհների համար սահմանելով գիտական հետազոտությունների՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան մակարդակ, մասնավորապես, խթանում է ՀՀ գիտնականների կողմից առավել բարձր վարկանիշ ունեցող միջազգային ամսագրերում հրապարակումները:

Գիտատեխնիկական համագործակցության հարցերով հայ-բելառուսական համատեղ հանձնաժողովի երրորդ նիստի հիմնական հարցը «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ԲՀ ԳՏՊԿ - 2018» համատեղ մրցույթի արդյունքների ամփոփումն էր: Վերոնշյալ մրցույթին ստացվել էին 17 հայտեր: Հանձնաժողովի անդամները մանրակրկիտ ուսումնասիրեցին ներկայացված հայտերի գիտական փորձաքննության արդյունքները, գոհունակությամբ նշեցին բոլոր հայտերի գիտական բարձր որակը:

2018թ. նոյեմբերի 28-ին կայացած նիստի ընթացքում քննարկվեց նաև Հորիզոն 2020 շրջանակային ծրագրի շրջանակներում համատեղ ծրագրերի ներկայացման հնարավորությունը: Բելառուսական կողմը շահագրգռված է այդ հարցում, քանի որ Հայաստանի Հանրապետությունը Հորիզոն 2020 ծրագրի ասոցացված անդամ է, և համագործակցությունն այդ շրջանակներում լավագույնս կնպաստի գիտության ոլորտի զարգացմանը երկու երկրներում: Սամվել Հարությունյանը պատրաստակամություն հայտնեց տվյալ հարցին աջակցություն ցուցաբերելու խնդրում:

Քննարկվող հարցերից երկուստեք կարևորություն էր ներկայացնում նաև Սևանա լճում Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության համար ազգային արժեք հանդիսացող քաղցրահամ ջրավազանների էկոհամակարգերի ուսումնասիրության միջազգային գիտագործնական կենտրոն - կենսաբանական կայանի գործունեության և ֆինանսավորման հետ հարցը: Սամվել Հարությունյանը նշեց, որ Հայաստանի Հանրապետությունը կատարել է 2013 թվականի հոկտեմբերի 14-ին ստորագրված «Սևանա լճում Հայաստանի

Հանրապետության և Բելառուսի Հանրապետության համար ազգային արժեք հանդիսացող քաղցրահամ ջրավազանների էկոհամակարգերի ուսումնասիրության միջազգային գիտագործնական կենտրոն - կենսաբանական կայանի հիմնադրման մասին» պայմանագրով սահմանված պարտավորությունների իր բաժինը, ներկայումս կայանը գործում է: ԲՀ գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի նախագահ Ալեքսանդր Շումիլինը տեղեկացրեց, որ գիտական սարքավորումների գնման համար անհրաժեշտ ֆինանսավորում ստանալու համար սահմանված ներպետական գործընթացն ավարտական փուլում է:

Գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի 23-րդ նիստի ընթացքում քննարկվեցին Գիտատեխնիկական և նորարարության ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի նախորդ նիստերի ընթացքում ընդունված որոշումների և ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման ընթացքը, միջպետական պիլոտային ինովացիոն ծրագրերի կատարման հետ կապված մյուս հարցերը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Գիտական փորձաքննության արդյունքներով առավելագույն գնահատական ստացած 4 գիտական նախագծեր Գիտատեխնիկական համագործակցության հարցերով հայ-բելառուսական համատեղ հանձնաժողովի անդամների միաձայն քվեարկությամբ երաշխավորվեցին ֆինանսավորման: Հանձնաժողովի անդամներն արձանագրեցին մրցույթին ներկայացված հայտերի բարձր որակը և համագործակցային կապերի ակտիվացումը երկու երկրների գիտական կազմակերպությունների միջև:

ՀՀ ԿԳՆ ԳԿ նախագահ Սամվել Հարությունյանը ԲՀ ԳՏՊԿ նախագահ Ալեքսանդր Շումիլինին փոխանցեց Միջազգային գիտատեխնիկական կենտրոնին անդամակցությունը վերականգնելու մասին ՄԳՏԿ գործադիր տնօրեն Դեյվիդ Կլիվի առաջարկ-նամակը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց լրացուցիչ քննարկումների միջոցով հստակեցնել անդամակցության կարգն ու պայմանները:

Գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի նիստի ընթացքում հաստատվեց ԱՊՀ անդամ-պետությունների ինովացիոն համագործակցության միջպետական ծրագրի (մինչև 2030թ.) շրջանակներում 2021-2023 թվականներին իրականացվելիք միջոցառումների ու նախագծերի ցանկը:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

ՀՀ ԿԳՆ ԳԿ նախագահ Սամվել Հարությունյանն առաջարկեց՝

- Հորիզոն 2020 շրջանակային ծրագրի շրջանակներում ներկայացնել համատեղ հայտեր,
- անցկացնել համատեղ գիտական փորձաքննություն. յուրաքանչյուր կողմ կվճարի սեփական գիտական փորձագետի կատարած աշխատանքի համար,
- գալիք 2019 թվականին կազմակերպել համատեղ առաջին սիմպոզիում՝ նվիրված հայ-բելառուսական համագործակցության արդյունքում իրականացված ծրագրերի հաշվետվությունների քննարկմանը,
- Հայաստանի Հանրապետությունում շուտով նախատեսվում է ներմուծել միջբնագավառային գիտության ոլորտում իրականացված հետազոտություններին նվիրված թեզերի համար «միանգամյա պաշտպանության» համակարգը, որի ժամանակ անհրաժեշտ է գոնե մեկ օտարերկրյա ընդդիմախոսի մասնակցություն: Առաջարկվել է քննարկել նմանատիպ պաշտպանություններին բելառուսական կողմի մասնակցության հարցը,
- Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին տրամադրել Բելառուսի Հանրապետության գիտատեխնիկական և ինովացիոն բոլոր ամսագրերի մասին տեղեկատվություն ստանալու մշտական հնարավորություն,

- Գիտատեխնիկական համագործակցության հարցերով հայ-բելառուսական համատեղ հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել Երևանում: Անցկացման ժամկետները կհստակեցվեն լրացուցիչ:

Առաջարկվել է Գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի հաջորդ նիստն անցկացնել 2019թ. գարնանը Ռուսաստանի Դաշնությունում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

05.12.2018թ.